

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄՍՏ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՅԻ
Ծ Ր Ա Գ Ի Ր

Ն Կ Ա Ր Զ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գ Ծ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Լ ՈՒ Ս Հ Ր Ա Տ

ՅԵՐԵՎԱՆ


1939 թ.

11 APR 2018

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՅԻ
ԾՐԱԳԻՐ

ՆԿԱՐՁՈՒԹՅՈՒՆ
ԳԾԱԳՐՈՒԹՅՈՒՆ



ԼՈՒՍԶՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

1939 թ.

Սրբազրիչ՝ Ղ. ԶՈՐԱՆՅԱՆ

Կոնս. սրբազրիչ՝ Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՆԿԱՐԶՈՒԹՅՈՒՆ

Հիմնգերոդ ու վեցերոդ դասարաններ

ԲԱՅԱՏՐԱԿԱՆ

Նկարչուի ղառավանդումը միջնակարգ դպրոցում հետևյալ խնդիրներն է առաջադրում.

1. ծանոթացնել սովորողներին մատիտով և ջրաներկերով աշխատելու տեխնիկայի հիմնական ձևերի հետ.

2. սովորեցնել պատկերավորման գրադիտության հիմունքները, վորը հնարավորություն է տալիս ծրագրային պահանջների սահմաններում, գրագետ կերպով պատկերավորելու զանազան առարկաներ.

3. աջակցել սովորողների նկարչական և ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը պատկերավորման արվեստի գծով.

4. սովորեցնել նկարչուի ղառավանդումը ձեռք բերված գիտելիքները և ունակությունները ռեալիստիկ գեղանկարչության ուսուցման մյուս առարկաների մշակումը թեթևացնելու նպատակով:

Այս խնդիրներն իրականացնելու համար դպրոցում գործադրվում են աշխատանքների հետևյալ տեսակները.

1. ըստ դիտողության և բնականից նկարել.

Գլավլիտի լիազոր Դ—1984, պատվեր № 20, տիրաժ 1000

«Քանաքեռի»-ի տպարան, Յերեվան, Լենինի 67.



11-363/477

2. իյուլուտրացիոն և թեմատիկ նկարչություն.

3. ղեկորատիվ նկարչություն և պատկերավորման արվեստի՝ նկարչական, կենդանագրական, քանդակագործական, ճարտարապետական ու ժողովրդական ղեկորատիվ արվեստի աշխատանքների դիտում:

Առանձին առարկաները և առարկաների խումբը մատիտով և ներկերով բնականից նկարելը, վորտեզ մտնում են նմանապես մարդկանց ու կենդանիների ուրվագծեր նկարելը, ծրագրում հանդիսանում է, վորպես հիմնական առաջատար բաժին: Բնականից նկարելը պետք է սովորեցնի աշակերտներին վերարտադրել նկարներում առարկաների ձևի և գունավորման առանձնահատկությունները, վորոնք կախում ունենա առարկայի տարածության մեջ նկարողի նկատմամբ ունեցած դիրքից:

Բնականից նկարելուն պետք է նախորդեն հետազոտության գրագետ պատկերավորման յեղանակներն ու կանոնները ցույց տալն ու բացատրելն ուսուցչի կողմից. հասկացողություն հայացքակետի և սրա նշանակության մասին, հորիզոնի մասին, ուղղաձիգ գծերը ձիշտ վերարտադրելու մասին, հարթության նկատմամբ զուգահեռ և նկարողի նկատմամբ անկյուն կադմոդ և այլ դիրքով ընկած հորիզոնական գծերի ուղղության փոփոխության մասին և այլն:

Նկարչության համար վորպես մոդելներ, կարելի չե ոգտագործել ընտանեկան, հասարակական և արտադրական կենցաղի դանազան առարկաներ, ընտրված վորոշ կարգով՝ ըստ իրենց ձևի բարդության, գունաւորման և մակերևույթի առանձնահատկության՝ փայլատ, փայլուն, վորորկ և այլն:

Բուսական աշխարհի որյեկտների նկարումները կատարվում են չոր կամ կանաչ բույսերից, բանջարեղեններից, մրգերից կամ դրանց մոդելներից, կենդանիների նկարումները՝ խրովիլակներից և կենդանի որինակից:

Ցանկալի յե մարդկային ֆիգուրայի կառուցվածքի մասին և մարդու շարժման սխեմայի մասին դրույցներն անցկացնել մարդու անատոմիական աղյուսակներ և կմաղք ցույց տալու միջոցով: Դրան զուգընթաց, մարդու շարժումները դիտվում են նաև սովորողներից մեկի վրա:

Մարդու ֆիգուրա նկարելիս ուսուցիչը պետք է սովորողներին բացատրի, թե մարդու դիրքը փոխվելիս ամբողջ մարմնի ծանրության կենտրոնի տեղափոխությունը ինչպես է տեղի ունենում, և ընդգծի այդ հանգամանքը նկարում նկատի ունենալու անհրաժեշտությունը:

Բնականից նկարելը պետք է հերթափոխվի հետևյալ կարգով. նախ անցկացնել առանձին առարկաների, իսկ հետո առարկաների խմբերի նկարում (խմբերի առարկաները պետք է համանման լինեն այն առարկաներին, վորոնց վաղորոք առանձին նկարել են):

Խմբով վերցրած առարկաները պետք է ձևով և գունով պարզ լինեն: Բացի այդ, նրանք պետք է միմյանց մոտ լինեն իրենց նշանակությամբ:

Վորոշ առարկաներ, վորոնց բնականից նկարելը դասարանում հնարավոր չի, ինչպես որինակ՝ շենքեր, ծառեր, ընտանի խոշոր կենդանիներ կամ թռչուններ և այլն, կարելի յե հիշողությամբ նկարել, բայց վոչ

այլ կերպ, քան իրականութեան մեջ նախորոք նրանց դիտելուց հետո:

Տեսողական հիշողութեանը և յերևակայութեանը զարգացնելու նպատակով կարելի յի առաջադրանք տալ հիշողութեամբ նկարելու միևնույն առարկաները, սակայն տարածութեան մեջ նկարողի նկատմամբ այլ կերպ դասավորված:

Նկարչութեան բոլոր աշխատանքները կարելի յի կատարել մատիտով, ջրաներկով և այլ նյութերով:

Մատիտով աշխատանքը, կատարվում է գլխաւորապէս ուրվագծային արագ նկարումների ձևով. առաջադրանքների մի մասը կատարվում է ծավալը լուսաստվերով (լույս, կիսաստվեր, ստվեր, ռեֆլեկս, փայլ) վերարտադրելու ավելի յերկարատե կերպով:

Ջրաներկով աշխատանքը, վորին պետք է նախորդի մեծ հոգատարութեամբ պատրաստված նկարը, պետք է՝

ա) սովորողների մեջ ամրացնի տեխնիկական ունակութիւններ՝ ներկերի խառնում, հարթ լիցք, գույնի ծորացում:

բ) խորացնի առարկայի ձևը պատկերավորելու ունակութիւնը, սովորեցնելով աշակերտներին ծավալը ճիշտ վերարտադրել՝ հիմնական գույնն ու ժողացնելու և թուլացնելու միջոցով ու

գ) նրանց մեջ զարգացնել ունակութիւն տեսնելու և ընտրելու առարկայի բնորոշ գույնը:

Նկարչութեան դասընթացի այս ծավալն ու նկարի հանդեպ առաջադրվող պահանջները միջնակարգ դպրոցում պատկերավորման գրագիտութեան այն միջնամուկ են, վորոնք միանգամայն մատչելի յեն ամեն

մի սովորողի համար և անհրաժեշտ են գիտութեան և տեխնիկայի ամեն մի բնագաւառում, ինչպէս նաև արվեստի բնագաւառում:

Իլյուստրատիվ թեմատիկ և դեկորատիվ նկարչութեանը մեծ նշանակութիւն ունի պատկերավորման գրագիտութեան ընդհանուր սիստեմում, վորպէս սովորողների տեղծագործական ընդունակութիւնների զարգացմանը նպաստող միջոց:

Այս բաժինը մշակելիս դասատուն պետք է մեծ ուշադրութիւն դարձնի առաջադրութիւններն ըստ իրենց բարդութեան աստիճանի ընտրելու վրա: Բացի այդ, անհրաժեշտ է, վորպէսզի դասատուն հաշվի առնի այն հանգամանքը, վոր ամեն մի տեղծագործական աշխատանք հիմնականում անցնում է իր զարգացման յերեք շրջանները:

ա) դիտավորութեան մտահղացում, բ) մատերիալի ընտրութիւն և ուսումնասիրութիւն և գ) նըկարչական արտադրանքի տեղծում: Ուստի դասատուն չպետք է սահմանափակվի այդ աշխատանքների միայն նախնական մեկ ստադիայով՝ եսքիզը կազմելով: Եջիզն անհրաժեշտ է դիտել, ցույց տալ աշակերտին եսքիզի մեջ յեղած դրական և բացասական մոմենտները, առաջարկել նրան դիտելու և բնականից նկարելու միջոցով ուսումնասիրել այն առարկաները, վորոնք մտնում են իլյուստրացիայի կամ թեմատիկական նկարի բովանդակութեան մեջ, և վերջապէս, նորից նկարել նույն թեմայի վերաբերյալ նկար, ուղղելով նախնական եսքիզում ունեցած թերութիւնները:

Պատկերավորման արվեստի գեղարվեստական արտադրանքների դիտումն աշակերտներին ընդհանուր գեղարվեստական զարգացում տալուց բացի, ունի և մեծ մանկավարժական նշանակություն, վորպես նկարչության հիմնական կանոնների յուրացումը հեշտացնող միջոց: Ուստի լավագույն ռեալիստ վարպետների ռեպրոդուկցիաներ և նկարները ցույց տալը պետք է դասառոււն նկարչության դասին լայնորեն կիրառել նշակա պատկերի կառուցվածքի որոնքները բացատրելու, նույնպես և աշակերտությանը առանձին լավագույն վարպետների արտադրանքների հետ ծանոթացնելու միջոց:

Դիտման որոշակիների ընտրությունը պետք է շատ խորը մտածված լինի, ռեպրոդուկցիաները (վերարտադրությունները) ըստ բովանդակության պետք է համապատասխանեն առանձին դասերի կոնկրետ խնդիրներին, որինակ՝ առարկաների ծավալը վերարտադրելու յեղանակները բացատրելիս՝ կարելի յե ցույց տալ հողանդական վարպետների նատյուրմորտները (անկենդան բնություն նկարները), տարածություն վերարտադրելիս՝ Շիշկինի, Լեվիտանի պեյզաժները, մարդուն բնականից նկարելիս՝ Ռեպինի, Մերովի, Բվանովի ուրվագիծ նկարները, սյուժետային նկարի վրա աշխատելիս՝ Սուրիկովի, Ռեպինի, Կրամսկու և ուրիշների կոմպոզիցիաները, ղեկորատիվ բնույթի աշխատանքներում՝ տեղական ղեկորատիվ ստեղծագործության նմուշները:

Ուսուցիչը կարող է իբրև ձեռնարկ ոգտագործել «Юный художник» ժուռնալում ղետեղված առանձին հոդվածներն ու վերարտադրությունները:

Նկարչության հատուկ դասերից բացի, աշակերտներն իրենց ձեռք բերած գիտելիքներն ու ունակությունները պետք է ոգտագործեն դպրոցական ուսուցման մյուս առարկաների մշակման ժամանակ, այդ տեսակ աշխատանքներ կատարելով տանը կամ դասարանում այս կամ այն առարկայի պարապմունքների պրոցեսում:

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ (30 ԺԱՄ)

Ներածական զրույց ղնական պարագաների և ռեպրոդուկցիաների ցուցադրումով:

Ծավալավոր առարկաներ պատկերավորելու և տարածության վերարտադրելու յեղանակները. հասկացողություն նկարողի հայացքակետի նշանակության մասին և հորիզոնի մասին. առարկաների պարագծի փոփոխումը՝ կախված նկարողի նկատմամբ տարածության մեջ նրանց ունեցած դասավորությունից (1 Ժամ):

I. Բնականից նկարում (30 Ժամ)

Պարզագույն առարկաների գրագետ կերպով պատկերավորելու հիմունքների ուսումնասիրություն, այդ առարկաների բնորոշ ձևի և ծավալի (գծային և լուսաստվերով) վերարտադրություն:

1. ԳԼԱՆԱԶԵՎ ԱՌԱՐԿԱՆՆԵՐԻ ՆԿԱՐՁՈՒԹՅՈՒՆ

(6 ժամ)

Գլանաձև առարկաների պատկերավորումը, կախված նրանց դիրքի կամ նկարողի հայացքակետի փոփոխությունից. ա) բաժակ, գավաթ, կոնսերվի տուփ: Մինչև լայն առարկաները՝ տարբեր դիրքով և զանազան հայացքակետից. բ) ետիկետավոր և բաց կափարիչով զլանաձև բանկա կամ տուփ զանազան դիրքերով. գ) պիոններական թմբուկ զանազան դիրքով. դ) առարկաների խումբ՝ ներկի գլանաձև բանկա, ներկարարական վրձիններ և խողովակաձև փաթաթած թուղթ. ե) առարկաների խումբ. պուլիկ, սափոր՝ թաս կամ գավաթ. զ) առարկաների խումբ՝ թմբուկ և փող:

2. ՈՒՂՂԱՆԿՅՈՒՆԱԶԵՎ ԱՌԱՐԿԱՆՆԵՐԻ ՆԿԱՐՁՈՒԹՅՈՒՆ: ԱՌԱՆՁԻՆ ՎԵՐՑՐԱԾ ՅԵՎ ԽՄԲՈՎ (6 ժամ)

Ուղղանկյունաձև առարկաների պատկերավորումը՝ կախված նրանց դիրքի կամ նկարողի հայացքակետի փոփոխությունից՝ ա) մեծ չափսերի տուփ, արկղ, ճամբրուկ զանազան շրջվածքներով, միևնույն առարկաները բաց կափարիչով. բ) ուղղանկյունաձև առարկաների խմբեր:

3. ՄԱՐԴՈՒ ՆԿԱՐՈՒՄԸ ԲՆԱԿԱՆԻՑ (ՈՒՐՎԱԴԾԵՐ)

(6 ժամ)

Մարդկային ֆիգուրայի կառուցվածքի հիմնական հարաբերությունների և վոչ բարդ շարժման ժա-

մանակ նրա դիրքի փոփոխությունների վերարտադրություն (մի ուղվագծին տրվում է 15—20 բուլետ):

Մարդը կանգնած. ֆաս, մեջքից և պրոֆիլ: Մարդը քայլում է, կռնում է, հատակից առարկա յեքաճրացնում, նստած է (կիսադեմ դիրքով):

Վերոհիշյալ բոլոր առաջադրությունները կատարվում են մատիտով:

4. ՆԵՐԿԵՐՈՎ ԲՆԱԿԱՆԻՑ ԱՌԱՐԿԱՆՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ ՆԿԱՐՈՒՄ (12 ժամ)

Վերարտադրություն առարկաների բնորոշ գույնի և ծավալի:

Նկարչության համար մոդելների որինակելի ցանկ. ա) բանջարեղեններ և մրգեր (դեղձ, գաղար, տաքտեղ և այլն). բ) սափոր կամ պուլիկ և թաս. գ) սպորտի առարկաներ՝ վալեյբոլային և թենիսային գնդակ, ռակետակ. դ) ուսումնական պարագաներ (գիրք, զլորուս և ներկերի տուփ). ե) պիոններական կենցաղի առարկաներ (թմբուկ, փող). զ) ծաղիկը ծաղկամանում, ցնցուղ:

Առարկաների խմբերը դրվում են լուսավոր և հակադրող ֆոնում:

II. Նկարչություն զանազան թեմաներով (4 ժամ)

Մարդու և առարկաների նկարումը բաց և փակ տարածության մեջ, առարկաների դասավորություն և նրանց չափսային փոխհարաբերությունների վերարտադրությամբ: Դիտողական հեռանկարի հիմնական յերևույթների գրագետ պատկերավորում: Պատկերա-

վորման ամենաբնորոշ առարկաների ընտրությունը Դրանց ճիշտ դասավորումը թղթի թերթի վրա:

Որինակելի քեմաներ. ա) ամառը գետի վրա. բ) պիոնեռական ճամբարը. գ) կատուկ. դ) վեպերի և պատմվածքների իլյուստրացիաներ՝ Տուրգենևից «Մումու», Չեխովից «Կաշտանկա», Ա. Ս. Պուշկինից «Դուբրովսկի»:

III. Դեկորատիվ նկարչություն (4 ժամ)

ա) Տնային կենցաղի զանազան առարկաների համար զարդարանկարներ կազմելը: բ) Հոկտեմբերյան և Մայիսմեկյան տոների առթիվ լույս տեսնող դասարանական պատի թերթի ձևկատների համար նկարներ պատրաստելը: գ) Հոկտեմբերյան և Մայիսմեկի տոների առթիվ դասարանի զարդարման նախագիծ կազմելը:

ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ (38 ժամ)

I. Բնականից նկարում (31 ժամ)

Ավելի բարդ ձևի, զանազան վորակի մակերեվույթ ունեցող, տարբեր դիրքերով առարկաների գրագետ կերպով պատկերավորելու հիմունքների ուսումնասիրություն:

1. ԶԱՆԱԶԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՆԿԱՐՈՒՄՆ ԱՌԱՆՁԻՆ ՅԵՎ ԽՄԲՈՎ (6 ժամ)

ա) Ամբողջական և մասնատված ձմերուկ, ամբողջ և կտրատած խնձոր. բ) խոշոր և մանր առար-

կաների կոմբինացիաներ (միացում՝ գլանի և կոնի, յերկու գլանների և այլն, որինակ՝ ձագար, նավթաման, շիշ, կոլբա զանազան դիրքերով). գ) տարուբեռ, սեղան՝ փակ և բաց դռնակներով. դ) յերկուսից յերեք հատ նման առարկաների խմբեր, ավելի բարդ շրջվածքներով և զուգակցություններով:

2. ՓԱԿ ՅԵՎ ԲԱՅ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐՈՒՄ (3 ժամ)

Հորիզոնական գծերի ուղղության փոփոխությունը՝ կախված նկարողի հայացքակետից. ա) դասարանի կամ դահլիճի ներքին տեսքը՝ զանազան հայացքակետերից. բ) կահավորված բնակելի շենքի ներքին տեսքը (տնային առաջադրանք). գ) փողոց, ելեքտրաքարշի ուղիներ: Ուրվագծանկարում հիշողությունը՝ նախնական դիտողությունների հիման վրա:

3. ՈՒՐՎԱԳԾԱՆԿԱՐՈՒՄ ԲՈՒՑՍԵՐԻ, ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՄԱՆՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԲՆԱԿԱՆԻՑ (5 ժամ)

Բնորոշ ձևի ու ծավալի, կառուցվածքի, հարաբերությունների վերաբառըություն ա) ճյուղեր, ծաղիկներ. բ) մանր կենդանիներ և թռչուններ՝ զանազան դիրքերով (խրտվիլակների ուրվագծումներ):

4. ՄԱՐԴՈՒ ՈՒՐՎԱԳԾՈՒՄԸ ԲՆԱԿԱՆԻՑ (5 ժամ)

(15—20 բույս յուրաքանչյուր ուրվագծումի համար): 5-րդ դասարանի ուրվագծումների ամրացումն ու խորացումը. ա) մարդը կանգնած՝ զանազան դար-

ձեռով. բ) մարդը նստած (յերեսից). գ) մարդը կանգնած, մի վոտքի վրա հենված. դ) մարդը ծանրություն և տանում՝ ձեռքով, մեջքին. ե) մարդը ֆիզիկոսությամբ կամ աշխատանքային շարժման կեցվածքով. կրակում և, փայտ և կոտորում:

Վերահիշյալ բոլոր առաջադրանքները կատարվում են մատիտով:

5. ՏՆԱՅԻՆ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՑԱՂԻ ԱՌԱՐ-
ԿԱՆԵՐԻ ԽՄԲԵՐԸ ՄԱՏԻՏՈՎ ՅԵՎ ՆԵՐԿԵՐՈՎ ՆԿԱ-
ՐԵԼԸ ԲՆԱԿԱՆԻՑ (12 ժամ)

Առարկաների բնորոշ գույնը և նրանց ծավալը վերարտադրելու ունակության ամրապնդում:

Խմբերի համար վերցնում են ծավալավոր առարկաներ, ընտրված՝ ըստ բովանդակության և ըստ գույնի գուգակցության, լուսավոր և հակադրական գույնավոր ֆոնում:

II. Նկարում գանազան թեմաներով (4 ժամ)

Գրադեռ կերպով պատկերավորել՝ մարդիկ բաց և փակ տարածության մեջ: Առարկաների ընտրությունը և դասավորությունը իլյուստրատիվ նկարի մեջ՝ գլխավորի շեշտումով: Նկարի մեջ գործող անձանց, գործողության տեղի և ժամանակի հիմնական բնորոշ առանձնահատկությունների վերաբերում:

Որինակելի թեմաներ և գրական յերկեր՝ «Մեր փողոցը», «Գոտնտեսային բերքի պահպանությունը

պիոներների կողմից», «Ավիոմոդելիստների մրցությունը», Ա. Ս. Պուշկինի «Կապիտանի աղջիկը», Ի. Ս. Տուրգենևի «Վերսորդի հիշատակարանը»:

III. Դեկորատիվ նկարչություն (4 ժամ)

ա) Տնային և հասարակական կենցաղի զանազան առարկաների, հագստի և այլ իրերի զարդարանքներ կազմել:

բ) «Կարմիր Բանակի», և «Աշխատավորուհիների միջադպյին ուղի» տոների առթիվ լույս տեսնող դպրոցական պատի թերթի ճակատի համար նկարների կազմում:

գ) Հոկտեմբերյան և Մայիս 1-ի տոնի առթիվ դպրոցական դահլիճի զարդարման նախագծի կազմում:



Գ Մ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ¹⁾

Բ Ա Յ Ա Տ Ր Ա Գ Ի Ր

Գծագրությունն ուսուցանելու խնդիրը մեր խորհրդային դպրոցում շատ մեծ է: Հնարավոր է պատահումն պոլիտեխնիկական դաստիարակել, առանց սովորեցնելու նրան կողմնորոշվել և կարգալ վոչ բարդ դետալի, հասարակ շինարարական պլանի գծագրել, առանց պատվաստելու նրա մեջ գծագրի այս կամ այն վոչ բարդ դետալը գրաֆիկորեն, գրագետ կերպով պատկերելու ունակությունը, առանց զարգացնելու նրա մեջ վոչ բարդ դետալի գծագրելը տարածականորեն պատկերելու ունակություն, առանց դաստիարակելու նրանց մեջ իր տեխնիկական միտքը գրաֆիկորեն արտահայտելու ունակություն:

Համ Կ(բ)ի Կենտկոմը «Տարրական և միջնակարգ դպրոցների ուսումնական ծրագրերի և ուժիմի մասին» 1932 թ. դեկտեմբերի 25-ի իր պատմական վորոշման մեջ մատնանշեց «անբավարար կապվածությունը կամ նույնիսկ նրա բացակայությունն առան-

¹⁾ Կազմել է Ն. Ի. Տկաչենկոն մատակցությամբ ընկ. ընկ. Դ. Ս. Բայկովի, Ս. Կ. Բոգոլյուբովի, Ն. Ի. Դոբրոլյուբովի, Ի. Ի. Ֆեդոկինովի, Վ. Ա. Իսայևի, Ա. Ա. Կուչերովսկու, Ա. Ա. Տորչինսկու, Վ. Ա. Ֆեոդորովի, և Ն. Գ. Յաստրեբովի: Նմբագրել են՝ Ի. Ի. Ֆեդոկինովը, Ն. Ի. Տկաչենկոն և Վ. Ա. Ֆեոդորովը:

ձին ծրագրերի, առանձնապես մաթեմատիկայի ծրագրի ու գծագրության միջև...»:

Այս թերությունից խուսափելու համար գծագրության ծրագրերը այնպիսի հետևողականությամբ և կազմված, ըստ վորի յերկրաչափական բոլոր հիմնական կառուցումները անց են կացվում սկզբից, յերկրաչափության սխեմատիկ դասընթացով, իսկ այնուհետև գրաֆիկորեն ամրապնդվում ու գործադրվում են գծագրության պարապմունքներին:

Ծրագրում, գծագրության պարապմունքների ընթացքում, յերկրաչափական նյութի դասավորության մեջ հետևյալ կախումն է սահմանված.

1. փոխադարձ-ուղղահայաց ուղիղների կառուցումը պետք է անցնել 6-րդ դասարանի 3-րդ քառորդից վոչ առաջ.

2. տված անկյանը հավասար անկյան կառուցումը և յեռանկյունների կառուցումը՝ 6-րդ դասարանի 3-րդ քառորդից վոչ առաջ.

3. հատվածի և անկյան կիսելը՝ 6-րդ դասարանի 3-րդ քառորդից վոչ առաջ.

4. դուգահեռ ուղիղների կառուցումը՝ 7-րդ դասարանի 1-ին քառորդից վոչ առաջ.

5. հատվածի բաժանումը կամավոր թվով հավասար մասերի՝ 7-րդ դասարանի 1-ին քառորդից վոչ առաջ.

6. դուգահեռագծերի, շեղանկյունիների և յերկրաչափական այլ պատկերների կառուցումը՝ առանցքային և կենտրոնական սիմետրիային՝ 7-րդ դասարանի 2-րդ քառորդից վոչ առաջ.



7. շրջանագիծ և շրջանագծին շոշափողներ անցկացնելու խնդիրները՝ 8-րդ դասարանի 1-ին քառորդից վոչ առաջ.

8. բազմանկյունիների նմանության վրա հիմնված աշխատանքներ՝ 8-րդ դասարանի 3-րդ քառորդից վոչ առաջ.

9. շրջանագիծը 4, 8 և այլ մասերի բաժանելը՝ 8-րդ դասարանի 3-րդ քառորդից վոչ առաջ.

10. որթոգոնալ (աղղանկյուն) պրոեկցիաների թեորիան՝ 9-րդ դասարանի 1-ին քառորդից վոչ առաջ.

Այս փոփոխությունները մտցնելն արմատապես պետք է ազդի գծագրության աշխատանքների բնույթի վրա: Գծագրության դասերին այլևս անհրաժեշտ չի լինի յերկրաչափական կառուցումների թեորետիկ մասը մշակելու: Դասատուի խնդիրը միայն նրանում է կայանում, Վոր գրաֆիկորեն ամրապնդի յերկրաչափության դասերին սովորողների ձեռք բերած յերկրաչափական կառուցումների գիտելիքները և ձեռք բերած գրաֆիկական գիտելիքների հիման վրա անցնի զանազան գծագրական աշխատանքներում յերկրաչափական կառուցումները պրակտիկ կերպով գծագրելուն:

Բացի դրանից գծագրության ծրագրում մշտցրված են դիագրամներ գծելու աշխատանքներ: Ծրագրի այդ բաժինը մշակելիս գծագրության դասատուն մյուս առարկաների դասատուների հետ համաձայնության գալով պարտավոր է ավելի մեծ ուշադրություն դարձնել յերեխաների համար մատչելի նյութը խնամքով ընտրելու վրա:

Նկատի ունենալով այն հանգամանքը, Վոր տարածական պատկերման զարգացման պրոցեսը բավականին տեական և բարդ գործ է ու պահանջում է սովորողներից մեծ և սխտեմատիկ աշխատանք, 6-րդ դասարանից սկսած մտցված են հատուկ առաջադրանքներ, Վորոնք սովորողներին ծանոթացնում են որթոգոնալ և շեղանկյուն պրոեկտման սկզբունքներով պրակտիկ կերպով ծավալային ձևերի գծագրեր կազմելու հետ: Իսկ ուղղանկյուն և շեղանկյուն պրոեկտման թեորիան տարված է 9-րդ դասարան, ինչպես այդ բղխում է մաթեմատիկայի ծրագրերի պահանջից: Ծրագրերի այդ տիպի կառուցումը մի կողմից չի հակասում մաթեմատիկայի պահանջներին, Վորովհետև պրոեկցիայի հասկացողությունը սովորողներին տրվում է 6-րդ դասարանի յերկրաչափության դասընթացում— ուղղահայացի, թեք գծերի և ուղղի վրա սրանց պրոեկցիաների բաժնում և, մյուս կողմից՝ հսկայական նշանակություն ունի տարածական պատկերման զարգացման համար, Վորի առկայությունը սովորողների համար զգալի չափով կհեշտացնի Վոչ միայն տարածաչափության (ստերեոմետրիա) մշակումը, այլև նրանց աշխատանքը զանազան տեխնիկական խմբակներում:

Գծագրության ծրագրերը մշակելիս դասատուն պետք է հատուկ ուշադրություն դարձնի գծագրական պետք է հատուկ ուշադրություն դարձնի գծագրական գործիքների և պիտույքների հետ վարվելու տեխնիկայի յուրացման վրա և գծագրերի կատարման բնագավառում (գծերի տիպերի, շրիֆտների, չափերի նշանակման և այլն) ստանդարտների (միորինակության) պահպանման վրա (ОСТ общий стандарт): Տեխնիկական գծագրության այս տարրերը պետք է պահ-

պանվեն բոլոր գծադրերում: Բոլոր գծադրերը, սկսած առաջինից, պետք է կատարվեն ստանդարտ (միոբրինակ) ֆորմատներում շրջանակումով, ստանդարտային շրիֆտային վերտառություններով, ընդունված գծերի պատումով, չափսերի ճիշտ նշանակմամբ: Միայն այս պայմանների խստորեն կատարմամբ կարող են ամրապնդվել գծադրերի կատարման ճիշտ յեղանակները:

Վաստառուն պարտավոր է սխտեմատիկ կերպով շարադրել այն դիսքիպլինը, վոր ավանդում է ինքը, յերեխաներին ամեն կերպ վարժեցնելով դասագրքով ու գրքով աշխատելուն... Լայնորեն կիրառելով զանազան առաջադրություններ տալը—գիտելիքների վորոշ դասընթացի բավարար չափով տիրապետելուն համեմատ (խնդիրների և վարժությունների լուծում, մոդելների պատրաստում)...»: ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի 1932 թ. ոգոստոսի 25-ի այս ցուցումը գծադրության դասատուները շատ հաճախ մոռանում են:

Սովորողները գծադրության պարապմունքներին չեն ընտելանում ինքնուրույն աշխատանքին: Մինչդեռ գծադրության մի ամբողջ շարք աշխատանքներ—վորոնց մեջ պետք է դարսել՝ ա) գծադրերի կատարումը կցորդմամբ, բ) աքսոնոմետրիկ պրոեկցիաներում կատարած գծադրերի որթոգոնալ պրոեկցիաների գծադրերի կառուցումը, գ) գծադրերի պակաս մասերի լրացումը, դ) յերկու պրոեկցիաներով յերրորդի կառուցումը, ե) գծադրի ընթերցումը աքսոնոմետրիկ պրոեկցիայում պատկերում կադմելու ոգնությամբ—հսկայական նշանակություն ունեն ինքնուրույն աշխատանքում ունակություններ մշակելու համար և տարա-

ծական պատկերման զարգացման համար: Անհրաժեշտ է, վորպեսզի դասատուն սովորողների ինքնուրույն աշխատանքի վրա մեծ ուշադրություն դարձնի:

Բացի այդ, անհրաժեշտ է, վոր գծադրության դասատուն ուշադրություն դարձնի, վոր յուրաքանչյուր սովորող, յուրաքանչյուր դասի ժամանակ ունենա բոլոր անհրաժեշտ գործիքները և աշխատանքի նյութերը: Անհրաժեշտ սարքավորման բացակայությունը շատ հաճախ հանգեցնում է, մի կողմից՝ դասարանական կարգապահության խախտման, վորովհետև սովորողն ստիպված է անհանգստացնել հարեաններին և նրանց աշխատանքից կտրել, վորպեսզի նրանցից վերցնի աշխատելու համար իրեն անհրաժեշտ իրերը և մյուս կողմից՝ աշխատանքը տանը կատարելու ձգտմանը, իսկ դասարանում սահմանափակվելու միայն նախնակա՛ն գծադրությամբ:

Վորպես կանոն դասատուն պետք է ձգտի, վորպեսզի գծադրության աշխատանքի ամբողջ հիմնական մասը կատարված լինի դասարանում և վո՛չ թե տանը:

Անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել նաև սովորողների գիտելիքների ընթացիկ անհատական, սխտեմատիկորեն կատարվող հաշվառման գործի վրա: Միանգամայն պետք է անթույլատրելի համարել այնպիսի դրությունը, յերբ ուսումնական քառորդի ընթացքում կատարված աշխատանքները դասատուն նայում է մեկ անգամ: «Հաշվառման» այդպիսի դըրվածքը մի կողմից դասատուին հնարավորություն չի տալիս հետեւելու սովորողների աշխատանքի վորակին և մյուս կողմից հանգեցնում է սովորողի աշխատանքային ժամանակի ավելորդ գերբեռնավորման, յերբ

սովորողը ուսուցման քառորդի վերջին հանկարծ իմանում ե, վոր իրեն հարկավոր ե իր վատ կատարած մի քանի գծագրերը փոփոխել:

Վորպեսզի գծագրության դասավանդումը միանգամայն նորմալ կերպով դրված լինի, անհրաժեշտ ե, վոր դասատուն շատ մեծ ուշադրություն դարձնի գծագրության պարամետրներին, ձեռնարկներին, դետալներին և մոդելներին, կոնկրետներին ընտրության վրա: Ծրագրով նախատեսված բոլոր աշխատանքները կարող են ժամերի մատնանշված թվում կատարել այն պայմանով, վոր գծագրերի ձևակերպման մի մասը թողնվի տնային աշխատանքներին: Նկատի ունենալով սովորողների ընդհանուր բեռնվածությունը, միջնակարգ դպրոցում կարելի յե տան աշխատանքին հատկացնել գծագրության գծով տարեկան մոտավորապես 20 ժամ, այսինքն դասատվի հետ տարվող յուրաքանչյուր մեկ ժամի դիմաց կեսական ժամ տնային աշխատանք:

Ծ Ր Ա Գ Ի Ր

6 - ր դ դ ա ս ս ր ս ն

ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴ

1. ԳԾԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՅԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ՅԵՐԿՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Գծագրության ուսուցման նպատակներն ու խնդիրները հանրակրթական դպրոցում: Գծագրությունը վորպես ինքնուրույն առարկա, վորը հանրակրթական

մեծ նշանակություն ունի և հեշտացնում ե դպրոցական մյուս առարկաների ուսուցումը:

Գծագրողի կողմից կատարված գծագրական գանազան աշխատանքների՝ վերտառությունների, գրաֆիկների, դիագրամների, սխեմաների, հողաչափական պլանների, ճարտարապետական և տեխնիկական գծագրերի ցուցադրում:

Գծագրության աշխատանքների տեսակները, վորոնք պետք ե կատարեն սովորողները միջնակարգ դպրոցում և մասնավորապես 6-րդ դասարանում: Գծագրության ծրագրային աշխատանքների կատարման կարգը՝ դպրոցում և տանը: Աշխատանքի տեղի կազմակերպումը դասարանում: Խնամքով վերաբերմունք աշակերտական նստարանին: Հաշվառման տեսակները և սովորողների աշխատանքների գնահատումը:

2. ԳԾԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՊԻՏՈՒՑՔՆԵՐ

Գծագրական գործիքների ընտրությունը, նշանակությունը և ստուգման յեղանակները: Փորձատն ու ալն թղթի վորակը, վորոնց վրա պետք ե կատարվեն գծագրերը դպրոցում (203×288 մմ. կամ 203×144 մմ. OCT № 7532):

3. ԳԾԱԳՐԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Շրջանակի և վերտառության չափը: Վերտառության դասավորության տեղը գծագրի վրա: Վերտառության բովանդակությունը (OCT 3532 և 7543):

4. ԳԾԱԳՐԵՐԻ ՎՐԱ ԿԱՏԱՐՈՂ ՎԵՐՏԱՌՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐԻՖՏԸ (OCT 7535)

ա) Քանոնի և ուղղանկյուն յեռանկյան ոգնու-
թյամբ անցկացնել հորիզոնական և թեք գծեր, վորոնք
վորոշում են տառերի բարձրությունը, լայնությունը
և թեքությունը 75° անկյունով. բ) ստանդարտ շրիֆտի
առանձին տառերի ուսումնասիրություն. գ) տառերի
դասավորությունը բառերի մեջ. դ) տարածությունն
առանձին բառերի մեջ. ե) ծանոթացում մատիտով
և գրչով կատարվող ստանդարտ տառերի տեխնիկայի
գրություն հետ. զ) առանձին տառերի, բառերի և ամ-
բողջական տեքստի գրություն: № 7, № 5, № 3, 5 շրիֆտ-
ներ: Առանձին բառերի, խոսքերի, վերտառություն-
ների գրության վարժություններ:

5. ՊԼԱԿԱՏԱՅԻՆ (ՁՈՂԻԿԱՎՈՐ) ՇՐԻՖՏՈՎ ԿԱՏԱՐ-
ՎՈՂ ՎԵՐՏԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԼՈՁՈՒՆԳՆԵՐ

ա) Վերտառության բառերի դասավորումը տողի
վրա. բ) վանդակի չափսերի հաշիվը յուրաքանչյուր
առանձին տողի համար. գ) վանդակների գծումը բարակ
գծիկներով. գ) վերտառությունների տառերի կամ լո-
զունգի թափանցանկարում (прорисовка). ե) տառերը
հաստ գծով շրջապատելը. զ) վերտառության տառերի
զարգարումը (отделка) շտրիկներով կամ ներկով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Վերտառությունների և լոզունգների տեքս-
տը պետք է համապատասխանեցնել դպրո-
ցի կարիքներին: Յուրաքանչյուր սովորող
կրթող է կատարել միանգամայն ինքնու-
րույն աշխատանք:

ՅԵՐԿՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

ԳԾԵՐԻ ՏԻՊԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
(OCT 7537)

1. Հոծ, գծաշարային և կետ- գծաշարային գծեր:
Գծերի հարաբերությունն ըստ լայնության՝ մեկ գծա-
գրի սահմաններում:

2. Զանազան տիպի գծեր գծելու վարժություն-
ներ՝ հորիզոնական, ուղղահայաց և թեք՝ 45°, 30°, 60°, 75°:

3. Զանազան տիպի գծերով համակենտրոն շրջա-
նագծերի անցկացման վարժություններ:

4. Մետաղի համար նշանակման այս և այն կողմ
ուղղված 45° անկյունով շտրիխման վարժություններ
(OCT 7536):

5. Գծային, ուղղանկյուն հատվածային և սեկտորա-
յին դիագրամաների կառուցումը:

Շտրիխման և գունավորման գործադրությունը
ներանց վրա ցուցադրվող բովանդակությունը բացա-
տրելու և ավելի լավ պատկերելու նպատակներով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Յուրաքանչյուր առանձին սովորողի և սովո-
րողների խմբի համար աված դիագրամաների
նյութի բովանդակությունը պետք է վերցված
լինի պատմության, աշխարհագրության,
բնագիտության և այլ առարկաների դասա-
գրքերից (այլ առարկաների դասառուների
հետ համաձայնեցնելով), կամ թե պետք է
արտացոլի դպրոցական կյանքի դանազան
յերևույթները:

ՎՈՉ ԲԱՐԴ ՈՒՂՂԱԳԻԾ ՈՐՆԱՄԵՆՏՆԵՐԻ ԳԾԱԳՐՈՒՄ

Վորոնք արտահայտում են զանազան կոմբինացիաներում հանդես յեկող ուղիւ գծերի զուգակցումը, ա) նշում հիմնական և ոժանդակ բարակ գծերի, վորոնք հեշտացնում են որնամենտի կոնտուրի կառուցումը, բ) որնամենտների կոնտուրի գծագրումը հաստ գծերով, գ) որնամենտների զարդարումը շտրիխամբ և ներկով, դ) իրենց՝ սովորողների կողմից համանման որնամենտների կազմում (կոմպոզիցիա):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ծրագրի այս բաժնի մշակումից առաջ ուղղորդների կողմից պետք է զբաղիկորեն ամրապնդված լինեն յերկրաչափության պարապմունքների ժամանակ իրենց ձեռք բերած հետևյալ գիտելիքները. ա) հատվածի բաժանումը 2, 4, 8, մասերի, բ) տված անկյանը հավասար անկյան կառուցումը, գ) անկյան բաժանումը 2, 4, 8, մասերի, դ) ուղղահայացի անցկացումը տված ուղղի վրա՝ նրանից դուրս գտնված, կամ նրա վրա արված կետից, ե) յեռանկյունների կառուցումը, զ) ուղղանկյունը յերեք հավասար մասերի բաժանելը:

ՅՈՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

ՏԵՆԵԻԿԱԿԱՆ ԳԾԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ ՆԱԽՆԱԿԱՆ ԾԱՆՈԹԱՑՈՒՄ

1. Ուղղանկյան և յեռանկյան ձև ունեցող (ուղղանկյուն պլաստիկաներ, գծագրական յեռանկյուններ և այլն) «հարթ» առարկաների եսքիզների և գծագրերի կազմում: Վերևից ու կողքից կառուցած տեսքերի փո-

խարեն լուսանցքում հատուկ գծագիր կատարելը, ցույց տալու համար հաստությունն այն նյութի, վորից շինված են այդ առարկաները (OCT 7538, գծագիր՝ 18):

2. Եսքիզ, գծագիր, կալկա և սինկա: Եսքիզը, վորպես հիմք ամեն տեսակ գծագիր կառուցելու համար, Եսքիզի նկատմամբ յեղած պահանջները՝ նրա կատարման վորակի տեսակետից:

Գծագրերի վրա տեսքերի (պրոեկցիաների) տեսչադրությունը (OCT 7554): Գլխավոր տեսքը (ֆասադ), տեսքը վերևից (պլան) և տեսքը կողմից (պրոֆիլ): Գծագրի վրա առարկաների տեսքերի տեղեկության կանոնները: Առանցքների ուղղությունը և հիմնական փոխհարաբերությունները Ֆրոնտալ շեղանկյուն պրոեկցիաների կառուցման համար:

3. Լուցկու տուփի եսքիզի և գծագրի կազմումը յերեք տեսքերով և Ֆրոնտալ շեղանկյան պատկերմամբ: Միևնույն չափսը յերկու տեսքերով ցուցադրելու հնարավորություն: Չափսերի նշանակման հիմնական կանոնները և յեղանակները՝ զուգահեռանիստի բարձրության, յերկարության և լայնության նշանակման համար (OCT 7538):

4. Փոխադարձ ուղղահայաց հարթություններով և առարածության մեջ ամենահասարակ դրություններով ընկած պարզագույն դետալների և Ֆրոնտալ պատկերումների գծագրերի եսքիզների կազմում (առարկաների նիստերը զուգահեռ են պրոեկցիաների հարթություններին): Գծագրի վրա մասշտաբի նշանակումը (OCT 7538):

Յոթերորդ դասարան

ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴ

1. Տեխնիկական գծագրերի կառուցման վերաբերյալ հիմնական հասկացողությունները ամրապնդում: Կազմումը բնականից ֆրոնտալ շեղանկյուն պրոեկցիայով տեխնիկական նկարներ (կրոկի) և զուգահեռանկատերի կցորդված ամենապարզ դետալների եսքիզների կատարում: Գծագրերի գծագրումը տուշով ըստ կազմված եսքիզի:

2. Համանման դետալների գծագրերի գծագրում այն պատկերումների համաձայն, վորոնք կատարված են ֆրոնտալ շեղանկյուն պրոեկցիայով:

3. Համանման դետալների գծագրերի ընթացքում ֆրոնտալ պրոեկցիայի մեթոդով կազմված տեխնիկական նկար պատրաստելու միջոցով:

4. Գծագրերի ընթերցում՝ տված յերկու պրոեկցիաների ոգնությունը կառուցելով 3-րդ պրոեկցիան:

ՅԵՐԿՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

1. Ֆրոնտալ թեք անկյուն պրոեկցիաների (կրոկի) և եսքիզների զանազան վոչ բարդ դետալների տեխնիկական նկարների կազմում բնականից, վորոնք շեղակայացված են պրեդմայի ձևով, և պրեդմատիկ մարմինները զուգահեռանկատելով ու գլաններով զուգորդելով:

2. Այդ եսքիզներով գծագրերի գծագրում՝ ձևակերպելով այդպիսիք համաձայն OCT-ի:

3. Ֆրոնտալ շեղանկյուն պրոեկցիաներում պատ-

րաստած պատկերումների համանման դետալները գծագրում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.--Ծրագրի այդ բաժնի մշակումից առաջ սովորողները պետք է զբաղվելու են ամրապնդեն զուգահեռ ուղիղների, զուգահեռանկատերի, ուղղանկյունների, շեղանկյունների, քառակուսիների, սեղանների և բազմանկյունների կառուցմանը վերաբերող յերկրաչափական դետալները, վոր ձևեր են բերել յերկրաչափությունը զասերին:

Բացի զբանից սովորողներին պետք է ծանոթացնել, յեռանկյունների և լարերի աղյուսակի ոգնությունը, շրջանագծի բաժանման յեղանակների և ձևերի հետ:

ՅԵՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

1. Վոչ բարդ կորագիծ որնամենտների գծագրում:

2. Շտրիխով, լիցքով և ներկով կատարվող որնամենտների զարդարում:

3. Իրենց՝ սովորողների կողմից համանման որնամենտների կազմում (կոմպոզիցիա):

ՉՈՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

1. Բնականից կազմել կլորացրած ուղիղ անկյուններ և ուղղանկյուն ու կլոր անցքեր ունեցող պարզ դետալների եսքիզներ և ֆրոնտալ շեղանկյուն պրոեկցիաներով տեխնիկական նկարներ:

2. Կատարած պատրաստի պատկերումներով համանման դետալների գծագրերի գծագրում ֆրոնտալ շեղանկյուն պրոեկցիայով:

3. Գծագրերի ընթերցում տեխնիկական նկարների ոգնությամբ:

4. Գծագրերի ընթերցումը տված յերկու պրոեկցիաներով 3-րդ պրոեկցիայի գծագրումը լրացնելու միջոցով:

ՈՒՅԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴ

1. Յերկրաչափության դասերի ժամանակ սովորողների ձեռք բերած յերկրաչափական գծագրության գիտելիքների գրաֆիկական ամրապնդումը, վորը վերաբերվում է շրջանագծի և աղեղի կենտրոնը գտնելուն և շոշափողներ անցկացնելու զանազան դեպքերին. ա) տված շառավղի աղեղով սուր և բութ անկյունների կլորացումը. բ) մեկ և յերկու շրջանագծերին շոշափողներ կառուցելը. գ) տված շառավղի աղեղով ուղիղի կցորդումը շրջանագծին (ուղիղը արված է շրջանագծից դուրս և ներս. դ) տված շառավղի աղեղով յերկու շրջանագծերի կցորդումը (շրջանագծերը արված են մեկը մյուսի մեջ և դուրս):

2. Թեքման մեծությամբ անկյունների կառուցումը՝ արված՝ տոկոսներով, թվական հարաբերությամբ և թեքումների աղյուսակներով:

3. Հեծանի (բալկա) կամ անկյունալոր յերկաթի պրոֆիլի գծագրումը:

4. Տեխնիկական այն դետալների կոնտուրի գծագրումը առաջով, վորոնց շրջագծի բաղկացած է ուղիղ գծերի և շրջանագծերի աղեղների կցորդումից

(կցորդումների հիման վրա տեխնիկական ձևերի կառուցում):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Բոլոր աշխատանքները կատարվում են առաջով:

ՅԵՐԿՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

1. Տուփաձև, ովոիդալ կորերի և սպիրալների կառուցում: Կամարների գծագրում: Կամարաձև կորերի կառուցում: Ճարտարապետական բեկորների պրոֆիլներ:

2. Ծանոթացում այն հիմնական պայմանական նշանների հետ, վորոնք ընդունված են ճարտարապետական պլանները և սանիտարական տեխնիկական սարքավորումներն ու կենցաղային սպասարկման առարկաները գծագրելու ժամանակ:

3. Դասարանի հատակագիծը (եւքիզ և գծագիր):

4. Բնակելի սենյակի հատակագիծ (եւքիզ և գծագիր):

5. Բնակարանի կամ դպրոցական շենքի հարկի մի մասի հատակագիծ (եւքիզ և գծագիրը)

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Հատակագծերի գծագրելը կատարվում են դասատուի տված մասշտաբով:

ՅԵՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

1. Դժային, անկյունային (հարաբերական) և կտրվածքային (տասնորդական) մասշտաբների կառուցում:

2. Գծագրումն այն հիմնական պայմանական նշանների, ժողովնք ընդունված են հողաչափական պլանները գծագրելու համար:

3. Հողամասերի պլանի պատճեն հանելը (ընդորինակելը) մասշտաբի փոփոխմամբ՝ ամենից տիպիկ պայմանական նշաններ նշելով: Գծագրերի կատարումը տուշով և ներկով:

4. Պլանների վրա բարձրությունները և խորությունները նշանակելու հիմնական կանոնները՝ թվական նշաններով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. —Այս բաժինը մշակելիս պետք է ոգտագործել սովորողների կողմից յերկրաչափության պարապմունքներին ձեռք բերած նման բաղմանկյունների կառուցման գիտելիքներն ու ունակությունները:

ՉՈՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

1. Այն հատարակ ղետալների կամ մողելների եսքիզների նկարումը, ժողովնք իրենց ներկայացնում են քառակուսի և զլանաձև անցքերով պրիզմատիկ, զլանաձև բուրգաձև, կոնաձև և գնդաձև հոծ (ամբողջական) մարմիններ:

2. Գծագրերի գծագրում՝ ըստ նկարահանած եսքիզների:

3. Գծագրերի ընթերցում՝ ընթերցում տված յերկու պրոեկցիաների ոգնությամբ յերրորդ պրոեկցիայի գծագրումը լրացնելու միջոցով:

4. Ֆրոնտալ պրոեկցիայի կառուցում՝ ըստ կատարված որթոգնալ գծագրի:

ԻՆՏԵՐՈՂ ՊԱՍԱՐԱՆ

ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴ

1. Որթոգնալ պրոեկցիաների մեթոդը:

2. Պրոեկցիաների հարթությունները և նրանց նշանակումը գծագրի վրա:

3. Յերկու և յերեք հարթությունների վրա որթոգնալ պրոեկցիաների այնպիսի կետերի, գծերի և հարթ պատկերների, ժողովնք ընկած են պրոեկցիաների հարթության վրա և գտնվում են տարածության մեջ զանազան դիրքերում: Հատվածների և ֆիգուրաների իսկական մեծության վորոշումը ըստ իրենց պրոեկցիաների:

4. Զուգահեռանիստի, պրիզմայի, գլանի, բուրգի, կոնի և գնդի որթոգնալ պրոեկցիաները:

5. Զուգահեռանիստի և պրիզմայի մակերևույթի վրա գտնվող կետերը և գծերը:

ՅԵՐԿՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

1. Ընդհանուր հասկացողություն հարթությունների հետքերի մասին:

2. Պրոեկցիաների հարթություններին զուգահեռ հարթություններ և պրոեկտողներ:

3. Զուգահեռանիստի, պրիզմայի և բուրգի հատումը հորիզոնական պրոեկտող հարթություններով:

4. Կոնի և գնդի հատումը հորիզոնական հարթություններով:

ՅԵՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

1. Ելիպսի (ձվածիրի) կառուցման յեղանակներ: 1. Ելիպսի (ձվածիրի) կառուցման յեղանակներ:

2. Մարմինների հատումը պրոեկտով թեք հարթութուններով:

3. Հատողների խակական (ИСТИННОЙ) մեծության զանելը հատված մարմինների պտտման, համատեղման և փոխադրման կառուցման մեթոդներով (բացի կոնից):

4. Պրոեկցիաների տեսքի հաջորդական փոփոխությունը՝ մարմինների պտտման և թեքման կապակցությամբ: Խորանարդի որթոգոնալ իզոմետրիկ պրոեկցիայի կառուցումը՝ նրա դրությունը պրոեկցիաների հարթության նկատմամբ փոփոխելու միջոցով. ա) խորանարդը դրված է հորիզոնական հարթության վրա: Նրա կողմնային նիստերը շրջված են դեպի Ֆասադի հարթությունը 45° անկյունով. բ) խորանարդը շրջված է գագաթի շուրջը 55° անկյունով (բարձրացված է հորիզոնական հարթությունից 35° անկյունով):

5. Ծանոթություն առանցքների և այն հիմնական հարաբերությունների հետ, վորոնք ընդունված են աքսոնոմետրիկ (իզոմետրիկ) պրոեկցիաների կառուցման համար (ОСТ հավելված № 534):

6. Հարթ Ֆիգուրաների՝ քառակուսու, ուղղանկյան, վեցանկյան, շրջանի և անկանոն բազմանկյան գծագրումը իզոմետրիկ պրոեկցիայով:

7. Ծանոթացում այն կոր գծի գծագրման յեղանակի հետ, վորը ներգծված է շեղանկյան մեջ (ելիպսը

փոխարինող կորի պարզեցրած կառուցումը իզոմետրիկ պրոեկցիայով):

8. Հիմնական յերկրաչափական մարմինների գծագրում իզոմետրիկ պրոեկցիայով:

ՉՈՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

1. Տեխնիկական նկարների (կրոկի) բնականից նկարահանումը իզոմետրիկ պրոեկցիայով և եսքիդների կազմումը այն հասարակ մոդելներից (հոծ և սնամեջ), վորոնք իրենցից ներկայացնում են ուսումնասիրված յերկրաչափական ձևերի զուգորդումը:

2. Գծագրերի գծագրումը ըստ նկարահանված եսքիդների:

3. Համանման դետալների գծագրերի գծագրումն ըստ այն պատրաստի նկարների, վորոնք կատարված են իզոմետրիկ պրոեկցիայով:

4. Գծագրերի ընթերցում՝ տված յերկու պրոեկցիաներով 3-րդ պրոեկցիայի գծագրումը լրացնելու միջոցով:

Տասերորդ դասարան

ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴ

1. Կոնի հատումը հարթություններով՝ հիմքին ուղղահայաց, վերտիկալ-պրոեկտով և նրա կողային ծնիչի մակերևույթին զուգահեռ:

2. Կառուցում պարբերի, հիպերբոլի, ելլիպսի, Արքիմեդի սպիրալի և ցիկլոիդի:

3. Հատած կոնի փոխադրի կառուցումը:

4. Պտուտակային գծեր գլանի մակերևույթի վրա:

5. Պարուրի (ռեզրա) պայմանական նշանակումը (OCT 7541):

6. Հեղույսի (բոլորի), մանեկի (գալկայի) և տափողակի (շալբայի) կառուցում:

ՅԵՐԿՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

1. Մարմինների փոխադարձ հատման ժամանակ անցման գծերի պրոեկցիաների կետերը գտնելու հիմնական կանոնները:

2. Մարմինների փախադարձ հատման այն ամենահասարակ դեպքերը, վերոնք սահմանափակված են հարթութույններով:

3. Գլանը գլանով և գլանը կոնով հատելը:

ՅԵՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

1. Եսքիզների կազմում, վոչ բարդ տեխնիկական դետալներից անհրաժեշտ քանակությամբ պրոեկցիաներով՝ չափսերի կտրվածքների և հատումների նշանակմամբ:

2. Գծագրերի, գծագրումն ըստ եսքիզների OCT-ի համաձայն:

ՉՈՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

1. Նախնական հասկացողություն հավաքական գծագրի մասին և նրա դետալացման մասին:

2. Վոչ բարդ հավաքական գծագրերի դետալացումը եսքիզացման յեղանակով՝ որթոգոնալ և աքսոնոմետրիկ պրոեկցիաներով:

3. Յեղրափակման զրույց միջնակարգ դպրոցում գծագրության գծով կատարված աշխատանքների ամփոփման մասին:

ԳԾԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏՈՒՅՔՆԵՐ ՅԵՎ ԴՈՐԾԻՔՆԵՐ

480 միլիմետրանոց քանոն: Ուղղանկյուն յեռանկյուններ՝ 45° և 60°-ի: Յեռանիստ մասշտաբային քանոն: Չապակարկին՝ ներդրովի մատիտով: Ռեյսֆետեր: Գծագրական թուղթ՝ Ֆորմատ 4 (203×288 մմ): Գծագրական թուղթ՝ Ֆորմատ 5 (144×203 մմ): Կնոպկաներ, ռետիններ: № 3 և 4 մատիտներ գծագրելու համար: № 2 մատիտներ շրջանակման և վերտառությունների համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Чертежи в машиностроении. Изд. Всесоюзного Комитета по стандартизации при СТО.

2. Маслов И. Ф., Куликов С. М., Евдокимов И. И., Курс черчения, изд. ОНТИ, 1937 г., ц. 7 р.+1 р. 50 к.

3. Евдокимов И. И. Альбом учебных таблиц по черчению для средней школы. Учпедгиз 1936 г., ц. 5 р. 80 к.+75 к.

4. Никулин М. А. Строительное черчение. ОНТИ., 1936 г., ц. 4 р. 50+60 к.

5. Коковин И. Н. и Князьков М. А. Методы построения и чтения инженерно-строительных чертежей. ОНТИ, 1935 г., ц. 2 р 10 к.

6. Филасов Н. В. Пособие по архитектурному черчению. ОНТИ, 1937 г., ц. 3 р.+75 к.



ՀՀ Ազգային գրադարան



NL1051323

13 СЕН 1939

454

11
36314

ГІНЦ 50 407.

- 20 -